

## ԵՐՐՈՐԴԱՅԻՆ ԱՏԱՄՆԵՐ


Պատվաստ ծնոտի շրջանում

Եգիպտական փարավոնների դամբարանների սուսիաներով և Տարբվինիայի էտրուսկների գերեզմաններում գտնված իրերով կարելի է ապացուցել, որ եգիպտացիներն արդեն մեր թվարկությունից մոտավորապես 2500 տարի, իսկ էտրուսկները մեր թվարկությունից մոտավորապես 100 տարի առաջ ծնոտի վրա պատվաստ էին կատարում հորթի ատամներով և ոսկե կապերով ամրացնում մնացած ատամներին: Հաշվի առնելով այն ժամանակաշրջանի գիտության պարզացման աստիճանը, դա բարձրագույն նվաճում էր: Միայն հապարամյակներ անց, 20-րդ դարի 30-ական թվականների վերջին, տեխնիկայի ու գիտության նվաճումների պուզակցման շնորհիվ հրեւարավոր դարձավ արհեստական ատամներն ամրացնել ծնոտի վրա առանց վրտանգելու բուժվող հիվանդին: Դեռևս անցյալ դարում սովորեցին սեփական ատամների, կամ ատամի ծիլերի պատվաստ կատարել: Այդ փորձերի հաջողությանը նպաստում էին փղոսկրը, մետաղն ու արհեստական այլ նյութեր:

Այդպիսի վիրահատման դեպքում մետաղե հենքը դրվում է ծնոտի վրա՝ լնդի ու շրջոսկրի տակ: Եթե պետք է փոխարինել միայն առանձին ատամներ, ապա կիրառվում է միջոսկրային պատվաստման մեթոդը: Այսինքն հենքերը, որոնք ծառայում են որպես ատամի արմատ, անմիջապես ոսկրին են կցվում:

1810 թվականին իտալացի Մաջջիոլին փորձում է ծնոտի վրա օգտագործել «ոսկե մարմնիկներ» կամ փղոսկրե ատամներ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Ելիսենն ու Ֆորմիջջինին առաջինը հաղորդեցին արհեստական նյութերով ու մետաղե պարուրածն հենքով միջոսկրային պատվաստման մասին: Բոլոր պատվաստումների առավելությունն այն է, որ բուժվող հիվանդը շատ քիչ է ծանրաբեռնվում:


Բերանի խոռոչում արհեստական ատամների համար դրվում են անհրաժեշտ սլունիկներ: Քանի որ մետաղե հենքը ճշտությամբ պետք է համապատասխանի ծնոտի կառուցվածքին, ապա առաջին իսկ վիրահատության ընթացքում անհրաժեշտ է ոսկորը մերկացնել պատճենը հանելու համար: Հատուկ լա-



Արմատամարմնիկն ըստ Ելիսենի (ձախից).  
պարուրածն հենքը ըստ Ֆորմիջջինի (աջից):

1943 թվականին շվեդացի Դալը հաղորդեց առաջին, այսպես կոչված ենթաշրջոսկրային պատվաստման մասին:

բորատորիայում պատրաստվում է մետաղե հենքը, որի համար որպես նյութ ծառայում են տանտալը, վիտալիումը



Պատվաստման հենք, որը պատրաստվում է տանտալից, վիտալիումից կամ կոբալտի, քրոմի, մանգանի համաձուլվածքից:



Պատվաստի մետաղե հենք: Միայն սյունիկներն են երևում բերանի խոռոչում:



Պատրաստի հենքապատվաստը: Ատամների պրոթեզն ամրացված է սյունիկների վրա:

կամ կոբալտի, քրոմի, մանգանի համաձուլվածքները: Մինչև այժմ չի հաջողվել ստեղծել մարմնահաշտակյաց արհեստական այնպիսի նյութեր, որոնք փոխարինեին մետաղե հենքին: Երկրորդ վիրահատության ժամանակ պատվաստը դրվում է, և ոսկորը շրջապատող շարակցական պատյանը միացվում լորձաթաղանթին: Մետաղե հենքը կամ բոլորովին չի ամրացվում, կամ էլ ամրացվում է պրոտոստիկներով: Միայն վերքն ապաքինվելուց հետո կարելի է պատրաստել ատամների պրոթեզը: Մետաղե հենքերը պահանջում են մեծ հենարան, և այդ մեթոդն ավելի կիրառելի է ատամներից լրիվ կուրկ ծնոտների դեպքում:

Զանի որ պատվաստը խորթ մարմին է, ապա պետք է ամեն մի ինֆեկցիայի վտանգը կանխվի: Այդպիսի վիրահատությունից հետո հիվանդը պետք է ստացիոնար բուժման ենթարկվի: Վիրահատական ու պրոթեզային միջոցառումների այդ կոմբինացիան նպատակահարմար է կիրառել այն դեպքում, երբ բուժվող հիվանդի ծնոտի ոսկորներն այնքան տափակ են, որ նորմալ պրոթեզ դնելը հնարավոր չէ: Այնուամենայնիվ, որպես կանոն, նմանօրինակ վիրահատությունն ավելորդ է, որովհետև ատամնաբուժական ժամանակակից մակարդակը բավարարում է հիվանդի կոսմետիկական ու ֆունկցիոնալ պահանջները: